մանաւ Տէրութեան և յանձնարարական թղթովք առաքեցին զՅովհաննէս վարդապետ ցամաքաւ 'ի Զմիւռին. 'ի հասանիլ նորա անդ և ընթեռնուլ Հիւպատոսին զգրեանս, եկան 'ի ճանապարհ զերկուս նաւս մին մեծ և միւսն փոքր, և Յովհաննէս վարդապետ 'ի Նմա ('ի 11 Յուլիսի), և դնացին դէպ 'ի կղզիս Յունաց 'ի խնդիր դերելոց և ընչից։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս համբաւեալ էր 'ի մէջ հասարակաց թէ Գաբրիէլ Պատրիարք առաքեալ է յեգիպտոս զերկուս Վարդապետս վասն կարեաց Աթոռոյն, եւ առնուլ 'ի Կուսակալէ երկրին տոկոսիւք 2000 քսակս արծաթոյ յանուն Երուսաղէմի. լուեալ էր զայս և Գրիգոր Գալֆայ 'ի Կեսարիա, զնոյն հաստատէին և նամականիք Եգիպտոսի գրեալ առ ոմանս յԱմիրայից։ Եւ 'ի սաստկանալ չշնչմանց՝ զայրացան յոյժ Ամիրայք, և կոչեցին զՓոխանորդ Յարութիւն վարդապետն, եւ նորա գոլով անտեղեակ իրացն, մնաց անպատասխանի առաջի նոցա. եւ նոքա կշտամբէին զնա, թէ զի՞նչ կամիք առնել՝ առանց խորհելոյ զվախճանն, կամի՛ք արկանել զազգն ողջոյն 'ի վտանգ մեծ, զի 'ի պատահիլ փոփոխութեան Կուսակալի երկրին՝ ո՞չ ապաքէն ազգն այրի և տոչորի 'ի Տէրութենէ, և կամ զայս եւս փակեալ դրան Բեթղեհէմի՞ նմանեցուցանէք, որ առանց հարցանելոյ արարիք, և այլ սոցին նըման բանք։ Արդարեւ կրեցին և կրէին զպէտսպէս նախատինս 'ի Դրանէ՝ վասն դրան այնորիկ 'ի խնդրել նոցա հրովարտակ վասն այնր. զի Լատինք և Դեսպանն Գաղղիոյ ընդդէմ զինեալ էին՝ և Դուռն ոչ կամէր լսել զբանս Հայոց, այլ 'ի ստիպելն՝ ասացին դատաստանաւ վճարել զիրան, Հայք ոչ առին յանձն՝ զի դատ նորին վճարեալ էր յերուսաղէմ, այլ ներքին միտք Նախարարաց էր երկարել զբանն եւ շահիլ յերկուս կողմանց, որպէս արարին 'ի դատին Յունաց։

Ապա ստիպեցին Ամիրայք զՅարութիւն վարդապետ հարկեցուցիչ բանիւ գրել յերուսաղէմ և իմանալ զստուգութիւն խնդրոյն։ Խնդրեցին նաեւ զպատասխան մահսերական գրոյն իւրեանց, զոր չեւ եւս էին ընկալեալ, զտուսմար պարտուց Աթոռոյն, զհաշիւս ելից և մտից, յօրէ յորմէ նստաւ Գաբրիէլ յԱթոռ Պատրիարքութեան, ան-